



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Լճափ համայնք, Ազատամարտիկների 27

04.07.2017թ

ՈՐՈՇՈՒՄ N 14 Ա

Լճափի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով՝

Համայնքի ավագանին որոշեց՝


1. Հաստատել Լճափի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի ղեկավարին՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու առաջարկությամբ մեկ շաբաթ ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարման լիազոր պետական կառավարման մարմնին:
3. Ուժը կորցրած ճանաչել Լճափ համայնքի ավագանու 20.01.2017թվականի թիվ 2 որոշումը
4. Սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Լճափի համայնքապետարանի Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ 3, ձեռննպահ չկա, դեմ չկա
Ավագանու անդամներ՝

1. Կ. Հովհաննիսյան
2. Տ. Գևորգյան
3. Ա. Նիկողոսյան

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՄԻՄՈՆՅԱՆ